

4. ԱՐՏԱՔԻՆ ՅԱՏՎԱԾ

4.1. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.1.1. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-մայիսին, փաստացի գներով, կազմել է 247817.3 մլն. դրամ կամ 450.2 մլն. ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), այդ թվում. ապրանքների արտահանումը՝ 71574.2 մլն. դրամ (130.0 մլն. դոլար) և ներմուծումը՝ 176243.2 մլն. դրամ (320.1 մլն. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 104669.0 մլն. դրամով (190.1 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնության կարգով ստացված բեռների՝ 97979 մլն. դրամով (178 մլն. դոլարով):

2001թ. հունվար-մայիսին, 2000թ. հունվար-մայիսի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 7.7%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 14.5%-ով (առանց թանկարժեք քարերի մշակման արտահանման աճը կազմել է 31.1%), իսկ ներմուծումը նվազել է 14.5%-ով (առանց թանկարժեք քարերի մշակման ներմուծման նվազումը կազմել է 11.1%): Բացասական առևտրային հաշվեկշիռը նվազել է 27.1%-ով:


2001թ. մայիսին արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 54630.5 մլն. դրամ (98.7 մլն. դոլար), որից արտահանումը՝ 17123.8 մլն. դրամ (30.9 մլն. դոլար), իսկ ներմուծումը՝ 37506.7 մլն. դրամ (67.8 մլն. դոլար): 2001թ. մայիսին ապրիլի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 2.9%-ով, ընդ որում՝ արտահանումն աճել է 38.4%-ով, իսկ ներմուծումը նվազել է 7.8%-ով:

2001թ. հունվար-մայիսին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 64859 մլն. դրամ (117.8 մլն. դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 26.2%-ը (2000թ. հունվար-մայիսին՝ 20.65%), իսկ այլ երկրների հետ՝ 182958.3 մլն. դրամ (332.4 մլն. դոլար) կամ 73.8%-ը (2000թ. հունվար-մայիսին՝ 79.35%), որից Եվրամիության (ԵՄ) երկրների հետ՝ 67794.7 մլն. դրամ (123.2 մլն. դոլար) կամ 27.4%-ը (2000թ. հունվար-մայիսին՝ 36.9%):


2001թ. հունվար-մայիսին ԱՊՀ երկրներ են արտահանվել 22095 մլն. դրամի (40.1 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 42764 մլն. դրամի (77.7 մլն. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 20668.9 մլն. դրամով (37.5 մլն. դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 49479.1 մլն. դրամի (89.9 մլն. դոլարի), իսկ ներմուծվել՝ 133479.2 մլն. դրամի (242.4 մլն. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 84000 մլն. դրամով (152.6 մլն. դոլարով):

2000թ. հունվար-մայիսի համեմատ 2001թ. հունվար-մայիսին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 49.5 %-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 3.7%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից աճել է 5.1%-ով, իսկ այլ երկրներից՝ նվազել է 19.3%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 2000 և 2001թթ. հունվար-մայիսին, ըստ ԱՊՀ և այլ երկրների
Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2001թ. հունվար-մայիսին , ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՂՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը հազ.ձ
	Արժեքը		Տեսակ. կշիռը, %	Արժեքը		Տեսակ. կշիռը, %	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	71574.2	130024.3	100.00	176243.1	320137.4	100.0	-190113.16
որից՝							
ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ	22095.0	40142.8	30.87	42764.0	77667.2	24.26	-37524.45
այդ թվում.							
Ռուսաստան	12355.6	22460.6	17.27	34797.3	63198.5	19.74	-40737.93
Թուրքմենստան	376.3	687.7	0.53	38.3	69.5	0.02	618.24
Վրաստան	5128.5	9305.8	7.16	3677.2	6673.5	2.08	2632.23
Բելոռուս	251.1	455.7	0.35	330.6	598.7	0.19	-142.99
Ուկրաինա	3244.7	5890.6	4.53	3687.3	6703.2	2.09	-812.60
Ղազախստան	301.5	548.5	0.42	84.1	152.6	0.05	395.96
ԱՊՅ այլ երկրներ	437.2	793.9	0.61	149.2	271.3	0.08	522.64
Այլ երկրներ	49479.1	89881.5	69.13	133479.2	242470.2	75.74	-152588.71
այդ թվում.							
ԵՄ երկրներ	18958.2	34445.0	26.49	48836.5	88718.2	27.71	-54273.22
Բելգիա	11136.9	20225.2	15.55	10418.4	18927.3	5.91	1297.93
Ֆրանսիա	176.3	320.6	0.25	2458.2	4475.5	1.40	-4154.84
Գերմանիա	2188.6	3978.9	3.06	5348.6	9725.5	3.04	-5746.62
Իտալիա	808.6	1469.8	1.13	6781.8	12309.0	3.84	-10839.16
Նիդեռլանդներ	514.5	938.6	0.72	1572.6	2854.8	0.89	-1916.21
Սեծ Բրիտանիա	3149.3	5724.5	4.40	15074.6	27361.0	8.55	-21636.43
Հունաստան	668.1	1216.4	0.94	3547.4	6457.8	2.02	-5241.36
Լյուքսեմբուրգ	0.0	0.0	0.00	539.9	978.9	0.31	-978.93
Այլ երկրներ	315.9	570.9	0.44	3095.0	5628.5	1.76	-5057.60
Շվեյցարիա	1727.5	3139.0	2.41	7434.9	13533.7	4.23	-10394.68
Իրան	6145.8	11157.8	8.58	17387.7	31573.7	9.86	-20415.91
Իսրայել	6949.4	12603.5	9.69	5724.2	10396.5	3.25	2207.03
Թուրքիա	262.0	474.6	0.37	6308.3	11473.4	3.58	-10998.83
Միաց.Արաք. Էմիրոթ.	990.0	1800.3	1.38	9519.6	17287.7	5.40	-15487.34
ԱՄՆ	9187.9	16709.4	12.85	16959.5	30787.8	9.62	-14078.41
Կիպրոս	545.8	992.3	0.76	1825.5	3308.4	1.03	-2316.17
Այլ երկրներ	4712.5	8559.6	6.58	19482.9	35390.8	11.05	-26831.17

2001թ. հունվար-մայիսին արտահանման ծավալի 30.9%-ն ուղղվել է ԱՊՅ երկրներ (այդ թվում 17.3%-ը՝ Ռուսաստանի Ղաշնություն, 7.2%-ը՝ Վրաստան և 6.4%-ը՝ ԱՊՅ մյուս երկրներ), 69.1%-ն աշխարհի այլ երկրներ, այդ թվում 26.5%-ը՝ ԵՄ երկրներ (որից 15.5%-ը՝ Բելգիա, 3.1%-ը՝ Գերմանիա, 4.4%-ը՝ Սեծ Բրիտանիա), 12.8%-ը՝ ԱՄՆ և 8.6%-ը՝ Իրան:

Ներմուծման ծավալի 24.3%-ը բաժին է ընկել ԱՊՅ երկրներին (որից 19.7%-ը՝ Ռուսաստանի Ղաշնությամբ), իսկ 75.7%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 27.7%-ը՝ ԵՄ երկրներին (որից 5.9%-ը՝ Բելգիային, 8.55%-ը՝ Սեծ Բրիտանիային), 9.6%-ը՝ ԱՄՆ-ին և 9.9%-ը՝ Իրանին:

Արտահանման և ներմուծման ծավալներն ու տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹, 2001թ. հունվար-մայիսին
(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզ /քաղաք	Արտահանում			Ներմուծում		
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	Հազ. \$		մլն.դրամ	Հազ. \$	
Ընդամենը ՀՀ	69762.1	126724.1	100.0	167843.7	304860.3	100.0
ք.Երևան	40007.9	72690.5	57.4	130250.2	236568.9	77.6
Արագածոտն	82.4	149.3	0.1	299.4	542.6	0.2
Արարատ	1744.7	3167.8	2.5	1990.7	3613.4	1.2
Արմավիր	368.3	670.6	0.5	1589.9	2887.3	0.9
Շիրակ	198.0	359.2	0.3	3268.0	5938.6	1.9
Վայոց Ձոր	134.4	244.3	0.2	391.8	711.4	0.2
Տավուշ	82.4	149.8	0.1	94.6	173.0	0.1
Սյունիք	4336.8	7891.0	6.2	7456.8	13536.4	4.4
Գեղարքունիք	447.9	813.8	0.6	565.9	1028.3	0.3
Լոռի	4210.4	7643.7	6.0	3142.7	5703.0	1.9
Կոտայք	18149.0	32944.1	26.0	18793.7	34157.4	11.2

2001թ. հունվար-մայիսի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 71.7%-ը (արտահանումը՝ 57.4%, ներմուծումը՝ 77.6%) իրականացվել է Երևան քաղաքում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 15.5%-ը՝ Կոտայքի մարզի և 5%-ը՝ Սյունիքի մարզի կազմակերպությունների կողմից: Հանրապետության մյուս մարզերում արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը չի գերազանցել 3.1%-ը:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը, ըստ առանձին ապրանքախմբերի, 2001թ. հունվար-մայիսին

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվեկշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն. դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	71574.2	130024.3	100.00	176243.1	320137.4	100.00	-190113.2
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	453.6	826.6	0.64	7086.3	12870.5	4.02	-12043.9
Բուսական ծագման արտադրանք	103.0	187.1	0.14	17796.6	32351.3	10.11	-32164.3
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	33.5	60.4	0.05	4024.7	7315.2	2.29	-7254.8
Պատրաստի սննդի արտադրանք	10239.5	18613.7	14.32	14912.4	27087.5	8.46	-8473.8
Հանքահումքային արտադրանք	8943.4	16235.1	12.49	37672.8	68320.4	21.34	-52085.3
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	473.0	860.1	0.66	12886.9	23393.2	7.31	-22533.0
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	3838.2	6970.5	5.36	5047.4	9174.2	2.87	-2203.7
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	403.1	730.9	0.56	2368.1	4313.4	1.35	-3582.5

¹ Արտահանման և ներմուծման ծավալների բաշխումը մարզերի իրականացվել է ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության իրականացման վայրի՝ «Հատկանշանալի նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա»:

4. ԱՐՏԱՔԻՆ ՂԱՏՎԱԾ

	ԱՐՏԱՅԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե- կշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ք Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Փայտ և փայտյա իրեր	160.0	290.9	0.22	1090.7	1982.3	0.62	-1691.4
Թուղթ և թղթից իրեր	44.7	81.3	0.06	3456.3	6282.5	1.96	-6201.2
Մանածագործական իրեր	2879.3	5235.0	4.03	7505.5	13629.0	4.26	-8394.0
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	80.3	145.7	0.11	1346.2	2450.4	0.77	-2304.8
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	417.6	762.4	0.59	2923.2	5311.8	1.66	-4549.4
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	26449.1	48029.7	36.94	18934.0	34389.8	10.74	13639.9
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	9996.5	18154.8	13.96	6397.1	11636.2	3.63	6518.6
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	5676.3	10330.2	7.94	17652.9	32094.1	10.03	-21763.9
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	485.8	880.8	0.68	5227.2	9510.9	2.97	-8630.1
Սարքեր և ապարատներ	739.9	1344.2	1.03	7618.8	13853.2	4.33	-12509.0
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	98.3	177.8	0.14	2295.2	4170.1	1.30	-3992.3
Արվեստի ստեղծագործություններ	59.1	107.3	0.08	0.9	1.6	0.00	105.7

2001թ. հունվար-մայիսին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 36.94%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 13.96%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, 12.49%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 14.32%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 24.87%, հանքահումքային արտադրանքը՝ 21.34%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 10.74%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 10.03%:

2001թ. հունվար-մայիսին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն 4 ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 6518.6 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում՝ 13639.9 հազ.դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 59936.8 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 52085.3 հազ. դոլար:

Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		
	2000թ. հունվար- մայիս, հազ. \$	2001թ. հունվար- մայիս, հազ. \$	աճի տեմպը (%)	2000թ. հունվար- մայիս, հազ. \$	2001թ. հունվար- մայիս, հազ. \$	աճի տեմպը (%)
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	113543.5	130024.3	114.51	374389.2	320137.4	85.51
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	167.5	826.6	493.33	15468.5	12870.5	83.20
Բուսական ծագման արտադրանք	345.7	187.1	54.11	43857.6	32351.3	73.76
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.3	60.4	18754.97	7933.9	7315.2	92.20
Պատրաստի սննդի արտադրանք	8254.5	18613.7	225.50	27210.1	27087.5	99.55
Հանքահումքային արտադրանք	14721.8	16235.1	110.28	70092.1	68320.4	97.47
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1779.9	860.1	48.33	37054.7	23393.2	63.13

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

	Արտահանում			Ներմուծում		
	2000թ. հունվար-մայիս, հազ. \$	2001թ. հունվար-մայիս, հազ. \$	աճի տեմպը (%)	2000թ. հունվար-մայիս, հազ. \$	2001թ. հունվար-մայիս, հազ. \$	աճի տեմպը (%)
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	3011.9	6970.5	231.43	6764.2	9174.2	135.63
Կաշվե հունք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	509.1	730.9	143.57	450.2	4313.4	958.10
Փայտ և փայտյա իրեր	207.2	290.9	140.38	1736.1	1982.3	114.18
Թուղթ և թղթից իրեր	119.6	81.3	67.96	9753.6	6282.5	64.41
Մանածագործական իրեր	4269.1	5235.0	122.62	12507.3	13629.0	108.97
Կոշիկներ, գլխարկներ, հովանոցներ	289.1	145.7	50.38	1775.3	2450.4	138.03
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	1512.5	762.4	50.41	3432.0	5311.8	154.77
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	50884.0	48029.7	94.39	51481.2	34389.8	66.80
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	17918.3	18154.8	101.32	7397.4	11636.2	157.30
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	7443.3	10330.2	138.78	55501.0	32094.1	57.83
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	840.9	880.8	104.74	10933.7	9510.9	86.99
Սարքեր և ապարատներ	972.3	1344.2	138.25	5436.3	13853.2	254.83
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	208.8	177.8	85.17	5568.9	4170.1	74.88
Արվեստի ստեղծագործություններ	87.5	107.3	122.61	35.0	1.6	4.59

2000թ. հունվար-մայիսի համեմատ արտահանման ծավալի աճ տեղի է ունեցել հիմնականում պատրաստի սննդի արտադրանքի (2.25 անգամ), պլաստմասսայի և դրանցից իրերի, կաուչուկի և ռետինե իրերի (2.3 անգամ), մեքենաների և սարքավորումների (1.4 անգամ) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ, 51.7%-ով նվազել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 5.6%-ով՝ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումը:

2000թ. հունվար-մայիսի համեմատությամբ 12.8%-ով աճել են պատրաստի սննդի արտադրանքի, 30.6%-ով՝ մանածագործական իրերի, 55.8%-ով՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ներմուծումը: Միևնույն ժամանակ, 33.2%-ով նվազել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, 42.2%-ով մեքենաների և սարքավորումների, 36.9%-ով՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 26.2%-ով՝ բուսական ծագման արտադրանքի ներմուծումը: